# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Փ/Ե N 012

ք.Երևան «28» սեպտեմբերի 2018թ.

Ուսուցման ազգային հիմնադրամը, մի կողմից, ի դեմս տնօրեն Մարինե Հակոբյանի, «այսուհետ՝ Կողմ 1» և «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (ՀՎՀՀ՝ 07400783, հասցե՝ ք. Նոյեմբերյան, Շիրազի 17), ի դեմս Ա. Ղազարյանի, մյուս կողմից, այսուհետ՝ «Կողմ 2», միասին «այսուհետ՝ Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմ 1-ը կազմակերպում է Կողմ 2-ի ներկայացրած Լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրի (ծրագրերի) մասնագիտական եզրակացության տրամադրման աշխատանքները, որը ներառում է՝

- Մասնագիտական, մեթոդական և տեխնիկական փորձաքննության միջոցով ծրագրի նախագծի համապատասխանության գնահատումը՝ պատվիրատուի կամ իր կողմից առաջարկվող նպատակին և սահմանված պահանջներին,
- Փորձաքննության արդյունքում մասնագիտական եզրակացության կազմումը՝ հիմնավորելով ծրագրում սահմանված բովանդակության, իրականացման տևողության, մեթոդաբանության և ռեսուրսների բավարար և իրատեսական լինելը,
- Փորձաքննության ենթարկված ԼԿ մոդուլային ծրագրի մասնագիտական եզրակացությունը՝ մինչև 3 տարի ժամկետով կիրառության երաշխավորելու մասին առաջարկությունը ՀՀ կրթության և գիտության նախարարին ներկայացնելը,
- ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ տվյալ ծրագիրը երաշխավորելու մասին հրամանի պատճենը և Կողմ 1-ի կողմից կնքված ծրագիրը Կողմ 2-ին տրամադրելը :

## II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Կողմ 1-ը պարտավոր է.**

2.1.1 ծառայությունը մատուցել պատշաճ որակով,

2.1.2 ծառայությունը մատուցել առավելագույնը 15 օրյա ժամկետում,

2.1.3 ըստ անհրաժեշտության ծրագրի լրամշակման և շտկումներ կատարելու վերաբերյալ տրամադրել խորհրդատվություն, մեթոդական և մասնագիտական աջակցություն:

**2.2 Կողմ 2-ը պարտավոր է.**

2.2.1 կատարել մասնագիտական եզրակացության պահանջներն ու համապատասխան շտկումները, լրամշակված ծրագիրը էլեկտրոնային (աշխատանքային) տարբերակով ներկայացնել Կողմ 2-ին,

2.2.2 ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված արժեքին համապատասխան,

2.2.3 ծառայության դիմաց վճարել ժամանակին:

**2.3 Կողմ 1-ն իրավունք ունի.**

2.3.1 աշխատել իր սահմանված ընթացակարգերով և նախընտրած մեթոդաբանությամբ,

2.3.2 խորհրդակցել պատվիրատուի հետ ծրագրի էֆեկտիվությունը բարձրացնելու համար:

**2.4 Կողմ 2-ն իրավունք ունի.**

- 2.4.1 Ծառայությունների մատուցման ցանկացած փուլում ծանոթանալ աշխատանքների ընթացքին, անհրաժեշտության դեպքում կատարել ուղղորդումներ

2.4.2. օգտվել Կողմ 1-ի խորհրդատվական և մեթոդական աջակցության ծառայություններից:

## III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվում 28.09.2018թ.-ից մինչև 28.12.2018թ.-ը:

3.2 Կողմ 2-ը Կողմ 1-ին սույն պայմանագրի 1.1.-րդ կետով սահմանված ծառայությունների համար վճարում է, յուրաքանչյուր լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրի համար 10 000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները):

. 3.3. Կողմի 2-ի ցանկությամբ և անհրաժեշտության դեպքում՝ Կողմ 1-ի առաջարկած այլ ծառայություններից օգտվելու դեպքում վճարումը կատարվում է համաձայն սահմանված գնացուցակի սանդղակի: Մասնավորապես՝

- Մասնագիտացված աջակցություն՝ 50 000 - 200 000 ՀՀ դրամ
- Խորհրդատվություն (մեթոդական, իրավական, ռազմավարական)՝ 100 000 – 500 000 ՀՀ դրամ

3.2 Գումարը վճարվում է Կողմ 1-ի բանկային հաշվին փոխանցման միջոցով: Վճարումը կատարվում է՝ հիմք ընդունելով ծառայության մատուցման վերաբերյալ կնքված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4.2 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3 Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

4.4 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 օրինակից, ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացումը և հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումը:

## V. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Կողմ 1**

**Ուսուցման ազգային հիմնադրամ**

Հասցե՝ ք. Երևան, Գլխավոր պողոտա,
Կառավարական շենք 3
ՀՎՀՀ 02603966
Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163007026061
Տնօրեն՝

________________ Մ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կողմ 2**

**<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ**

Հասցե՝ ք. Նոյեմբերյան, Շիրազի 17
ՀՎՀՀ 07400783
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900398000357

________________
(ստորագրություն)